8.qxd 25/04/2026 17:46 Page 1

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 27 ապրիլի 2026թ. թիվ 8 (636)

ՀԱՐԳՎԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՍՐԲԱԴԱՍՎԱԾ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ

Ապրիլի 24-ի առավոտյան ժամերից Գեղարքունիքի մարզի համայնքների բնակավայրերում մարդկային բազմամարդ երթերն ուղղվում էին դեպի Հայոց ցեղասպանության զոհերի հուշարձաններ, պանթեոններ ու հուշահամալիրներ, եկեղեցիներ՝ հարգանքի տուրք մատուցելու Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին:

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անդամները, Գավառ համայնքի ղեկավարի տեղակալները եւ համայնքապետարանի աշխատակիցները, Գեղարքունիքի մարզի ուժային կառույցների, Գավառի կրթամշակութային հիմնարկների ներկայացուցիչները, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Իսահակ վարդապետ Պողոսյանը, Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի անդամները, բազմաթիվ անհատ քաղաքացիներ ծաղկեպսակներ դրեցին ու ծաղիկներ խոնարհեցին Գավառ քաղաքի զբոսայգում՝ Հայրենիքի համար նահատակված հերոսների պանթեոն հուշահամալիրում՝ ի հիշատակ եւ ի խոնարհում Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների:

Ծաղկեդրումից հետո Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակներին նվիրված Բարեխոսության կարգ կատարեց Տեր Իսահակ վարդապետ Պողոսյանը՝ Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի աղոթակցությամբ:

Վարդենիս, Սեւան, Մարտունի եւ Ճամբարակ համայնքներում Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակներին նվիրված հիշատակի ու ոգեկոչման արարողություններ տեղի ունեցան համայնքի ղեկավարների, համայնքապետարանների աշխատակիցների, կրթամշակութային հաստատությունների, Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հիշատակի ու ոգեկոչման միջոցառումներ են տեղի ունեցել նաեւ մարզի կրթամշակութային հաստատություններում:

«Գեղամա աշխարհ»

...ԹՌՉՈՒՆ

Հացիս արտում ու հացիս հետ
Արյան ալը ծաղկում է դեռ...
Անքուն մի ցավ, մի ցավ հավետ
Սիրտս ծեծում, ծակում է դեռ...
Տեսնես՝ այգուս խնձորենին
Այս տարի շա՞տ ծաղիկ առավ...
Տեսնես՝ բակիս ծեր թթենին
Ո՞ր անճարը կտրեց տարավ...
Որդուս կանաչ-կարմիր կապել...
Նոր տան հիմքը կիսատ թողի...
Ո՞ր ճամփով է նա գնացել.
Ո՞ւմ հարցնեմ, ո՞ր անցնողին...
Հորս խոստում տվի մի օր,
Որ Մասիսի ձյուն կբերեմ...
Բայց տնքում է սիրտս անզոր.
Փեշի քարը գեթ համբուրեմ...
Միայն Հայի աչքն է թռչում.
Ուրիշ մեկը չկա... հաստա՜տ...
Հայի միտքն է՝ ինչպես թռչուն,
Գնում, գտնում կյանքն իր կիսատ...
Ա՛խ, թռչո՛ւնս, բույնդ պահեմ
Ափերիս մեջ, գլխիս վերում.
Դու քո տունը չկորցնես,
Դու, որ իմ տան լուրն ես բերում...

Թերեզա Հայրապետյան

ԽՐԱԽՈՒՄՎԵԼ ԵՆ ՀՀ ՆԳՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմում կայացել է ՀՀ Ոստիկանության օրվան նվիրված հանդիպում, որի ընթացքում ծառայողական պարտականությունները լավագույնս կատարելու համար Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով խրախուսվել են ՀՀ ՆԳՆ ոստիկանության եւ պարեկային ծառայության աշխատակիցները:

ՀՀ Ոստիկանության օրվա առթիվ շնորհավորելով հանդիպման մասնակիցներին՝ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը միաժամանակ շնորհակալական խոսք է հղել համակարգի աշխատակիցներին՝ մաղթելով նրանց հետագա հաջողություններ ու ձեռքբերումներ մասնագիտական աշխատանքում ու անձնական կյանքում:

Մարզպետը նաեւ հավաստիացրել է, որ մարզպետի աշխատակազմի եւ ոստիկանության համագործակցությունը պահպանվելու է ամենօրյա ռեժիմով:

ԵՂԵՌՆԻՑ ԵՂԵՌՆ

Այս ջարդ-սպանդը, նախճիր-եռեռնը
երեկ չսկսվեց
Ու ոչ էլ վաղն է այն ավարտվելու...
Պարույր Սեւակ

Ապրողներս հերթական Ապրիլի 24-ը դիմավորում ենք տխուր ու տագնապալի տրամադրությամբ, քանզի ոչ միայն խնկարկում ենք Հայոց ցեղասպանության սրբադասված զոհերի հիշատակը, այլ նաեւ մտահոգ ենք մեր շուրջ ընթացող պատերազմական իրադարձություններից ու դեռ ոչ մի կերպ չդադարող սպառնալիքներից:

Մարդասպանությունը շարունակում է մնալ մերօրյա քաղաքակիրթ կոչեցյալ աշխարհի օրակարգում, իսկ գերզարգացած, ռազմական հզորության գագաթնակետին հասած երկրների առաջնորդները, ովքեր իրենց գահերին բազմել են ժողովրդավարական ընտրությունների արդյունքներով, մի կողմից իրենց ձեռքերը թաթախել են միլիոնավոր անմեղ մարդկանց արյան մեջ, իսկ մյուս կողմից, այդ նույն ոճրագործությունների դիմաց, խաղաղության մրցանակների արժանանալու հայտեր են ներկայացնում:

Քաղաքակիրթ, բայց արյունարբու, երկոտանի բորենիները հետզհետե ընդլայնում են պատերազմների շրջանակները, կիրառում ավելի ու ավելի մահաբեր զենքեր՝ մարդկությանը ուղղակիորեն կանգնեցնելով բնաջնջման սպառնալիքի առաջ:

Մեր հոգու ցավը ոչ այնքան Հայոց ցեղասպանության ժխտումն է կամ մոռացության մատնումը, այլ դրա շարունակական ու ցավագին կրկնությունը, որի միջով անցնում ենք սերնդեսերունդ՝ այդպես էլ կառչած մնալով անզորության փեշերից:

Այո, մեր խնկարկումն ու աղոթքները վաղուց արդեն 1915-1923 թվականներին նահատակված, ցեղասպանված հայերի համար չեն, քանզի նրանց երթին արդեն գումարվել են անհաշիվ զոհեր, ովքեր Հայոց հայրենիքը շենացնելու փոխարեն հարյուր հազարներով ընկան Երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտերում, տասնյակ հազարներով՝ Արցախյան գոյամարտում, ովքեր բարբարոսաբար հոշոտվեցին Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում ու Ադրբեջանի այլ քաղաքներում:

Մեր խնկարկումն ու աղոթքները նաեւ Բաքվի բանտերում հանիրավի դապատարտված ու անսանձ բռնությամբ պահվող մեր եղբայրների համար են, ովքեր խիզախել էին զենք վերցնել նույն բռնության դեմ ու ժամանակին բռնել մարդասպան հրեշների ձեռքերը:

Մեր խնկարկումն ու աղոթքները նաեւ մեր միլիոնավոր պանդուխտ քույրերի ու եղբայրների համար են, ովքեր ապրում են հայրենիքից հեռու՝ հարազատ հողի ու ջրի կանչն իրենց սրտերում, ապրում են օտարության մեջ՝ ազգային ինքնության կորստյան կլանող ճիրաններում:

/շարունակությունը էջ 5-ում/

8.qxd 25/04/2026 17:46 Page 2

12 ԴԻՊԼՈՄ, 5 ԳՈՎԱՍԱՆԱԳԻՐ՝ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Դպրոցականների առարկայակայն օլիմպիադայի հանրապետական փուլում Գեղարքունիքի մարզի աշակերտներն արժանացել են 12 դիպլոմի եւ 5 գովասանագրի:

Առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլին Գեղարքունիքի մարզում մասնակցել են հանրակրթական 116 դպրոցների 9596 աշակերտ, որոնցից, 16 առարկաների մասով, մարզային փուլ երաշխավորվել եւ մասնակցել են 956 աշակերտ:

2026 թվականի փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում Գեղարքունիքի մարզից հանրապետական փուլ երաշխավորված 82 աշակերտից օլիմպիադային մասնակցել են 68-ը, առանց ՆԶՊ առարկայի արդյունքների, որի հանրապետական փուլը տեղի կունենա 2026 թվականի ապրիլի 25-26-ին:

Այսպիսով, առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլում առաջին կարգի դիպլոմի են արժանացել Մարտունի համայնքի Արծվանիստի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Սուսաննա Գվիդոնյանը՝«Աշխարհագրություն» առարկայից, Գավառ համայնքի Սարուխանի Հ.1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Աբել Խաչատրյանը՝«Պատմություն», առարկայից, եւ Մարտունի համայնքի Ներքին Գետաշենի Հ.1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Խաչիկ Թաթոյանը՝ «Հայ գրականություն» առարկայից:

Երկրորդ կարգի դիպլոմի են արժանացել Մարտունի համայնքի Ներքին Գետաշենի Հ.1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Վալերի Ավետիսյանը՝ «Գերմաներեն» առարկայից, Սեւանի Հ.1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտներ Մանան Շուշանյանը եւ Սոֆի Ավետիսյանը, ինչպես նաեւ Սեւան համայնքի Ծովագյուղի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Ալվարդ Մովսիսյանը՝ «Հայոց լեզու» առարկայից, Մարտունու Հ.2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Էլեն Ալեքսանյանը՝ «Աշխարհագրություն» առարկայից:

Երրորդ կարգի դիպլոմի են արժանացել Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Հ.2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Արթուր Հարությունյանը՝ «Աշխարհագրություն» առարկայից, Մարտունու Հ.2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Արփի Ավետիսյանը , Լիճքի միջնակարգ դպրոցի 11-12-րդ դասարանի աշակերտներ Էլեն Մարտիրոսյանը եւ Հասմիկ Փալիկյանը՝ «Պատմություն» առարկայից:

Գովասանագրի են արժանացել՝ Սեւան համայնքի Գեղամավանի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Վիկտորյա Պետրոսյանը՝ «Պատմություն» առարկայից, Կարմիրգյուղի Հ.2 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Ամալյա Գեւորգյանը՝ «Հայոց լեզու» առարկայից, Լիճքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Սյուզաննա Սարգսյանը՝ «Հայոց լեզու» առարկայից, Գավառի Հ.2 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Համեստ Կարապետյանը՝ «Հայ գրականություն» առարկայից, Սեւանի Հ.1 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Նարե Սեդրակյանը՝«Ռուսաց լեզու» առարկայից:

2026 թվականին տեղի ունեցած դպրոցականների առարկայական օլիմպիադայի եզրափակիչ փուլում հաղթած եւ դիպլոմներով պարգեւատրված աշակերտները կարժանանան անվանական կրթաթոշակի:

Համբարձում Մաֆարյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՎԱՐԴԵՆԻՍԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԵՏ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Վարդենիս քաղաքի մշակույթի տանը հանդիպում է անցկացրել համայնքի ակտիվ երիտասարդների հետ:

Կարեն Սարգսյանը Վարդենիսի երիտասարդների հետ ծավալել է անմիջական զրույց, պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին, խոսել տարբեր ոլորտներում առկա հնարավորությունների մասին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ 2027 թվականի «Մասնակցային բյուջետավորման» գործընթացի շրջանակում մշակել եւ ներկայացնել առաջարկ՝ Վարդենիսում երիտասարդական կենտրոն ստեղծելու նպատակով, որը կդառնա համայնքի երիտասարդների զարգացման, կրթական եւ նախաձեռնողական գործունեության կարեւոր հարթակ:

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԴՊՐԱԲԱԿ-ԲԱՐԵՊԱՏ-ԿԱԼԱՎԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքում 2026 թվականի մարտի վերջերից մեկնարկել եւ ընթանում են Դպրաբակ-Բարեպատ-Կալավան մարզային նշանակության ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Դպրաբակ-Բարեպատ-Կալավան մարզային ճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 1 միլիարդ 51 միլիոն 152 հազար դրամ, որը հատկացվում է պետական միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է 8 կիլոմետր երկարության ճանապարհի խճային հիմքի, երկշերտ ասֆալտբետոնյա ծածկի, ջրահեռացման համակարգի տեղադրում, իսկ բնակավայրերի ներսում՝ մայթերի կառուցում: Ասֆալտապատվող ճանապարհի մակերեսը կազմելու է 57 600 քառակուսի մետր: 1033 քառակուսի մետր մակերեսով ասֆալտապատում էլ կիրականացվի ճանապարհի մուտքերում եւ իջատեղերում:

Շինարարական աշխատանքների պատվիրատուն ՀՀ ՏԿԵ նախարարությունն է, իրականացնող կազմակերպությունը՝«Քարավան-11» ՍՊԸ-ն:

Զբոսաշրջային մեծ նշանակություն ունեցող այս ճանապարհը պատմության մեջ ասֆալտապատվում է առաջին անգամ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտի հասցնել 2026 թվականի դեկտեմբերին:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՆՁԱԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ ՆՇՎԵԼ Է ՅՈՒՅՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՄԱՄԲ

Մշակույթի միջազգային օրվա առթիվ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ գյուղի մշակույթի տանը կազմակերպվել է գունեղ եւ բազմաբովանդակ ցուցահանդես՝ կենտրոնում գործող երեք խմբակների աշխատանքների ներկայացմամբ:

Ցուցահանդեսին ներկայացվել են «Նկարչություն» (խմբակավար՝ Անժելա Ալոյան), «Դեկորատիվ կիրառական արվեստ եւ կավագործություն» (խմբակավար՝ Լիանա Թաթոյան), «Կար ու ձեւ» (խմբակավար՝ Շողեր Պետրոսյան) խմբակների սաների ձեռքի աշխատանքները:

Կենտրոնի սաները ներկայացրել են իրենց ստեղծագործական աշխատանքները՝ ցուցադրելով արվեստի տարբեր ուղղություններ՝ գծանկարչություն, գեղանկարչություն, բատիկ, կոմպոզիցիա, գորգագործություն, կավագործություն, կարպետագործություն, ասեղնագործություն, հելյունագործություն, ուլունքագործություն, ձեռքի կար, դիզայն եւ այլ մշակութային ձեւեր:

Հատուկ ուշադրության են արժանացել նաեւ «ԵՄ Կայուն էներգիայի շաբաթվա» շրջանակում ներկայացված մրցութային աշխատանքները, որոնք ստեղծվել էին «Մաքուր, անվտանգ եւ մրցունակ էներգետիկ միություն» խորագրի ներքո: Դրանք ստեղծագործաբար արտացոլում էին էներգախնայողության, վերականգնվող էներգիայի եւ կայուն զարգացման գաղափարները՝ ընդգծելով արվեստի եւ բնապահպանական մտածողության ներդաշնակությունը:

Ցուցահանդեսը դարձավ մշակույթի, ստեղծարարության եւ ժամանակակից արժեքների համադրության յուրահատուկ հարթակ՝ մեկտեղելով ավանդականն ու նորարարությունը:

Ցուցահանդեսի բացմանը մասնակցել է Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆԻ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՇՈՒՏՈՎ ԿԳՈՐԾԱՐԿՎԵՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի եւ Վարդենիս համայնքներում շուտով կգործարկվեն կանոնավոր ուղեւորափոխադրումներ՝ ապահովելով ավելի հարմարավետ եւ հասանելի տեղաշարժ բնակիչների համար:

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն արդեն հայտարարել է մրցույթ՝ միասնական երթուղային ցանցերի ձեւավորման նպատակով: Արդյունքում՝ հաղթող են ճանաչվել համայնքների կողմից ստեղծված «Մարտունու համայնքային տրանսպորտ» եւ «Վարդենիսի տրանսպորտ» ՓԲԸ-ները:

Ըստ նախատեսված գործընթացի՝ Մարտունի համայնքը ձեռք կբերի 19, Վարդենիս համայնքը՝ 27 նոր միկրոավտոբուսներ:

Նոր տրանսպորտային միջոցներով կիրականացվեն ինչպես միջմարզային, այնպես էլ՝ ներհամայնքային ուղեւորափոխադրումներ:

-ՀՀ ՏԿԵ նախարարությունն արդեն պայմանագրեր է կնքել ընկերությունների հետ, որոնց համաձայն՝ առաջիկա 6 ամիսների ընթացքում պետք է ներմուծվեն անհրաժեշտ տրանսպորտային միջոցները, եւ տրվի ուղեւորափոխադրումների գործընթացի մեկնարկը: Ծրագիրը կարեւոր քայլ է մարզում բնակչության շարժունակության բարելավման եւ համայնքների զարգացման ուղղությամբ,- ներկայացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

8.qxd 25/04/2026 17:46 Page 3

ՄԵԾ ԿՈՉՆԱԿԻ ՆԱԽՕՐԵԻՆ

Ապրիլի 23-ն է, եւ վաղը Հայաստանի բոլոր ճանապարհները կձգվեն դեպի Ծիծեռնակաբերդ:

Յուրաքանչյուրիս համար ցեղասպանությունը իր մասնավոր դրսեւորումն ունի, մեզանից յուրաքանչյուրն իր պատկերացումներն ունի այդ ողբերգության մասին: Շատերի համար այն խորությամբ բացահայտվում է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» իրապատումի էջերով, ոմանց համար եղեռնը ընտանեկան շրթեշուրթ պատմվող ահասարսուռ ոգեկոչում է: Ինձ համար, օրինակ, դա Եփրատի ափին ամբարտակի փոսորակ փորող շերեփի մեջ խշրտացող գանգոսկրերի զարզանդ հուշն է:

70-ականների սկզբին, դեպքերի բերումով, ես աշխատում էի Եփրատի ափի Տաբկա սիրիական քաղաքում: Խորհրդային մասնագետները հիդրոկայան էին կառուցում: Ավազի բարակ շերտի տակ մարդկանց ոսկորներ էին...

Ռուսներն անտարբեր կոխկրտում էին դրանք, անթաղ մասունքներն անցնում էին բետոնի տակ: Եվ մի օր, երբ ընկերներիցս մեկի սեղանին տեսա մոմակալի վերածված մի գանգ, եւ թվում է անառիթ ապտակեցի լենինգրադցի այդ բարեհոգի երիտասարդին, ինքս ինձ համար բացահայտեցի, որ իմ մեջ միշտ էլ անարցունք լացել է ազգիս անմխիթար ցավը...

Գուցե շատ անձնական են իմ մտորումները, բայց ես չեմ էլ փորձում ընթերցողիս այլ բանում համոզել: 1970-ի ապրիլի 24-ին Մեսքինեից Դեր Զոր տանող ճանապարհին մեր հայ վարորդը՝ Ներսեսը, երբ հանկարծակի կանգ առավ ամայի մի վայրում եւ լուռ ուտելիքի երկու խոշոր պարունակ իջեցրեց, ես բնազդաբար հասկացա, որ պատահաբար չեմ այստեղ: Ներսեսը ճամփեզրին շարեց ուտելիքը, խմիչքը, ջրի սափորը...Անոթի, ծարավ, ուժասպառ հայերի մահվան ճանապարհն էր Մեսքինեն, եւ այդ տարօրինակ ծեսով եղեռնից հրաշքով փրկվածների հետնորդները ոգեկոչում էին նահատակներին: Ու երբ 1992-ին իմ ծննդավայր Շահումյանը հայաթափվեց, ելուզակ ադրբեջանցին անտառներում մորթեց փախստականներից ետ մնացած ծերերին, հիվանդներին, մոլորված երեխաներին, ես վերջնականապես համոզվեցի, որ ցեղասպանությունն իրոք չփակվող, մշտանորոգ վերք է հայերիս համար:

Ինչքան էլ այսօր անհարկի թվա, այնուամենայնիվ, մտածում եմ, որ հայերի կորուստներն անհամեմատ քիչ կլինեին, եթե ռուսական «ազատարարներն» այն ժամանակ, ինչպես նաեւ 1992-ին, հավատարիմ մնային իրենց կոչմանը: Ականատեսների վկայություններն առաջին հայացքից շատ տարօրինակ մի իրողություն են ի հայտ բերում: Ռուսներն իրենց հերթին կողոպտում էին անպաշտպան հայերին, գիշերային խարույկի կամ կերուխումի նպատակով ավերում կանգուն մնացած հայկական շինությունները՝ եկեղեցի կամ տուն, երախտագիտությամբ հուսավառ հայերին կոպտորեն վանում իրենցից եւ սպասավորներ, ուղեկցորդներ կամ էլ խորհրդատուներ ընտրում թուրքին ու քրդին:

Երբեմն էլ, ինչքան էլ տարօրինակ է, իրենք էին նոր ջարդեր հրահրում:

Ինչպիսի ողբերգություն է բացահայտվում Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քահանա տեր Ավետիսյանի՝ կաթողիկոս Գեւորգ 5-րդին ուղարկած զեկուցագրում. «Խե՛ղճ ժողովուրդ, փրկչի տեղ դրած էին քրիստոնյա Ռուսիո բանակը, ու անոր առաջխաղացության մեջ փրկություն կա՝ կըսեր, բայց հազիվ թե անիկա Հայաստանի հողին վրա ոտք դրած է, հակառակը տեղի կունենա, եւ նահատակ ժողովրդյան հույսեր օդի մեջ կցնդի: Կերեւի թե բռնակալ օսմանյան կառավարության զզվելի արարքն է, որ կկրկնվի: Ռուս բանակի հրամանատարի քթի տակ ու աչքի առջեւ հայերը կխոխղողվին, կմորթվեն...ռուսները հոգ չեն ըներ առաջն առնելու եւ... երբ իրենց կըսվի, թե քյուրդերը Հայաստանի մեջ հայ չթողուցին, կպատասխանեն՝ «թող սպանեն, մենք Կովկասեն մարդ կբերենք, կբնակեցնենք հոս» եւ արհամարհելի վերաբերմունքով կվռնդեն իրենց տուներեն: Իսլամ չերքեզներ, որ դեռ երեկ գնդակ կարձակեին ռուս բանակի դեմ, ազատ, համարձակ կուգան, կշրջեն ռուս բանակի մեջ ու առանց զինաթափ ըլլալու...կսկսին իրենց շահատակություններուն... Անոր դեմն առնելու համար հայ կամավոր կռվողներու խնդրանքին ու դիմումին ռուսները զզվանքով մը կըսեն՝ մենք ձեր օգնության բնավ պետքություն չունենք»:

Նման հարյուրավոր վկայություններ կան Հայաստանի ազգային արխիվի հրատարակած «Վշտապատում» ժողովածուի մեջ, որի լույս աշխարհ գալու հարցում ժամանակին ես էլ իմ համեստ ներդրումն ունեցա, որպես սրբագրիչ- խմբագրող: Ի՜նչ դժվարությամբ ես այդ գործն արեցի: Ի՜նչ տվայտանքով անցա գրքի սոսկալի էջերի վրայով, ամեն էջում մի գազանային դաժանություն՝ պատռում էին հղիների որովայնը, սրի ծայրին թպրտացող մանուկին վեր պարզելով, քինախնդիր ոռնում՝ ահա Հայաստանի դրոշը, մոր աչքի առջեւ մորթած զավակի արյունը խմեցնում նրան...

Տողե՛ր,տողեր, որ գիշերային մղձավանջի պես ինձ հետապնդեցին, երբ ես ծանոթանում էի «Վշտապատում» խորագրով վկայությունների այդ ժողովածուին: Ներիր, իմ ընթերցող, համբերատար եղիր, բացեմ պատահական մի էջ եւ քեզ հասկանալի կդառնան հիշատակածս ապրումները.

«10-12 տարեկան տղաք հավաքելով կտանին գյուղեն քիչ հեռու եւ մեկիկ մեկիկ կմորթին...Չարչարանքի ատեն երեխաներեն մեկը կմխիթարի իր ընկերներ՝ ըսելով թե մեր ազգի ու հավատի համար է, որ կմեռնինք»:

«Պառավ կնոջ մը 18-ամյա տղան իր աչքի առաջն կմորթին եւ կռնակի միսեն ոստիկանը կտոր մը կտրելով կստիպե մորը, որ խորովե ուտե... մայրը ճիչ մը կարձակե, ապա քար մը վերցնելով ոստիկանին վրա կհարձակվի եւ անշունչ կփռվե գետնին»:

Ահա հակաստված, ահա Նեռը, որ շարժում էր դահճի ձեռքը, եւ ահա զոհը՝ Սպիտակ գառը, որ նահատակվելով ապավինեց մարդկային խղճին: Եվ մարդկային մեղավոր լռությունը խախտելու համար է, որ վաղը՝ Ապրիլի 24-ին հայոց բոլոր եկեղեցիները հերթական անգամ կոչնակ պիտի զարկեն...

Հայկ Մարտիրոսյան

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԱՄՍՅԱԿՆ ԻՐ ՇՈՒՐՋՆ Է ՀԱՎԱՔԵԼ 3450 ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ

Գեղարքունիքի մարզում անցկացվող «Թատերական երկամսյակի» շրջանակներում Գավառ քաղաքն ապրիլ ամսի ընթացքում հյուրընկալել է Երեւանի Խամաճիկների պետական, Վանաձոր քաղաքի Հ. Աբելյանի անվան դրամատիկական, Աշտարակի դրամատիկական թատրոնի դերասաններին:

Խամաճիկների պետական թատրոնի դերասանները հանդես են եկել Հանս Քրիստիան Անդերսենի «Արքայադուստրը սիսեռահատիկի վրա» հեքիաթի, Վանաձորի Հ. Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանները՝ «Սեր, թե՞ քուանշ» դրամայի, Աշտարակի դրամատիկական թատրոնի դերասանները՝ «Բարոն Մյունհաուզեն» մանկական դրամայի բեմադրություններով:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ եւ ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի աջակցությամբ 2026 թվականի մարտ-ապրիլ ամիսներին մարզում հայտարարված թատերական երկամսյակն այս տարի իր շուրջը հավաքեց 3450 հանդիսատեսի:

Արդեն 4-րդ տարին է, ինչ մարզում կյանքի է կոչվում «Թատերական երկամսյակ» ծրագիրը, որի ընթացքում ավագ եւ կրտսեր տարիքի հանդիսատեսը հնարավորություն է ունենում՝ դիտելու մայրաքաղաքի եւ հանրապետության տարբեր մարզերի թատերական խմբերի լավագույն ներկայացումներից: Գեղարքունիքի մարզպետի նախաձեռնության նպատակն է՝ մեծացնել մարզում թատրոնի նկատմամբ հետաքրքրությունը եւ նոր բովանդակություն հաղորդել մարզի մշակութային կյանքին:

Ավանդույթի համաձայն՝ թատերական երկամսյակի ընթացքում Գեղարքունիքի մարզպետի կողմից առանձնահատուկ ուշադրության են արժանանում Արցախյան պատերազմներում զոհված եւ վիրավոր զինծառայողների ընտանիքների անդամներն ու հարազատները, ովքեր մարզպետի աշխատակազմի կողմից հատուկ հրավերով այցելում են թատրոն: Գեղարքունիքի մարզում անցկացված «Թատերական երկամսյակ» նախաձեռնությանը լավագույն մասնակցության համար մարզ այցելած բոլոր թատերական խմբերը խրախուսվել են ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհակալագրով:

Հասմիկ Շահբազյան

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎԵԼ Է ՍԱՐՈՒԽԱՆ ԳՅՈՒՂԻ ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հիմնանորոգվել է Դեմիրճյան փողոցը:

Սարուխանի Դեմիրճյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 25 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Դեմիրճյան փողոցի ասֆալտապատում՝ 362 մետր երկարությամբ եւ 2500 քառակուսի մետր մակերեսով: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2026 թվականի ապրիլի սկզբից եւ ավարտվել նույն ամսի 20-ին: Տեղադրվել է նաեւ ջրահեռացման վաքեր՝ 295 մետր երկարությամբ:

Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Սարուխանի Դեմիրճյան փողոցն իր պատմության մեջ ասֆալտապատվում է առաջին անգամ:

«Գեղամա աշխարհ»

ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇԵՆՔԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում 2026 թվականի հունվարից մեկնարկել եւ ընթանում են թիվ 4 հիմնական դպրոցի վերանորոգման աշխատանքները:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, Գավառի Ավետիք Իսահակյանի անվան թիվ 4 հիմնական դպրոցի վերանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 271 միլիոն 980 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվում է պետբյուջեի միջոցներից:

Ծրագրով նախատեսվում է տանիքի, հատակի, էներգամատակարարման, ջրամատակարարման, ջեռուցման համակարգերի, դռների, սանհանգույցների մասնակի կամ ամբողջական վերանորոգում, պատերի ներքին ու արտաքին ներկում, այլ աշխատանքներ:

2026 թվականի ապրիլի 20-ի դրությամբ շինարարությունն իրականացվել է շուրջ 45 տոկոսով: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2026 թվականի հուլիսին:

«Գեղամա աշխարհ»

8.qxd 25/04/2026 17:46 Page 4

«ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ՍԵՂԱՆԻ ԹԵՆԻՍԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՓՈՒԼՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՄԵՐԸ

«ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի մարզային փուլի արդյունքների ամփոփումից հետո առաջիկայում կայանալիք եզրափակիչ փուլում Գեղարքունիքի մարզը կներկայացնեն Սեւան համայնքի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների եւ Գագարինի միջնակարգ դպրոցի 5-9-րդ դասարանների աշակերտներից կազմված թիմերը:

Գագարինի միջնակարգ դպրոցի նորակառույց մարզադահլիճում ապրիլի 6-ին եւ 8-ին անցկացվել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի մարզային փուլը:

Ապրիլի 6-ին մրցապայքարը ծավալվել է համայնքային փուլերում առաջինից երրորդ տեղերը գրաված Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների 5-9-րդ դասարանների աշակերտներից կազմված 15 հավաքական թիմերի միջեւ:

Մարզային փուլում արդյունքները բաշխվել են հետեւյալ կերպ՝ 1-ին տեղը զբաղեցրել է Սեւան համայնքի Գագարինի միջնակարգ դպրոցի թիմը,

2-րդ տեղը՝ Գավառ համայնքի Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան N2 միջնակարգ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Վարդենիս համայնքի Շատջրեքի միջնակարգ դպրոցի թիմը:

Ապրիլի 8-ին միմյանց միջեւ ուժերը չափել են համայնքային փուլում առաջինից երրորդ տեղերը գրաված Գեղարքունիքի մարզի համայնքների դպրոցների 10-12-րդ դասարանների աշակերտներից կազմված հավաքական 15 թիմերը:

Այս տարիքային խմբում մարզային փուլում արդյունքները բաշխվել են հետեւյալ կերպ՝ 1-ին տեղը զբաղեցրել է Սեւան համայնքի Խ. Աբովյանի անվան ավագ դպրոցի թիմը, 2-րդ տեղը՝ Գավառ համայնքի ավագ դպրոցի թիմը, 3-րդ տեղը՝ Ճամբարակ համայնքի Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմը:

Հաղթողները պարգեւատրվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության հավաստագրերով:

Գեղամ Չարվադարյան

ՋԻԼՈՒՄ 2018-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 15 ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ գյուղում 2018-2025 թվականների ընթացքում սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության 15 ծրագիր է իրականացվել, որոնց ուղղությամբ կատարված կապիտալ ներդրումները կազմել են 1 միլիարդ 920 միլիոն 913 հազար դրամ:

Իրականացված ծրագրերից 12-ը սուբվենցիոն են՝ 69 միլիոն 113 հազար դրամ ընդհանուր արժեքով, եւ 3-ը՝ պետական՝ 1 միլիարդ 851 միլիոն միլիոն 800 հազար դրամ ընդհանուր արժեքով:

Իրականացված ծրագրերի արդյունքում 2018-2025 թվականների ընթացքում Ջիլում կառուցվել եւ շահագործվել է արդի չափորոշիչներին համապատասխան միջնակարգ դպրոցի շենք, որի ներսում գործում է նաեւ նախակրթարան, 1900 մետր երկարության մայթ, 3600 մետր արտաքին լուսավորության ցանց, 3193 մետր խմելու ջրատարի ներքին ու արտաքին ցանցեր, 1 հակակարկտային կայան, 1900 մետր սալիկապատ մայթ, հիմնանորոգվել համայնքային կենտրոնի շենքը եւ հանրապետական, մարզային ու ներհամայնքային նշանակության շուրջ 9100 գծամետր ճանապարհ:

Ջիլի միջնակարգ դպրոցը կառուցվել է «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում, պետբյուջեի միջոցների հաշվին, 880 միլիոն դրամ արժեքով: Վարդենիս-Շողակաթ մայրուղուց Ջիլ մտնող ճանապարհը, որը տանում է Ջիլի միջնակարգ դպրոց, եւս հիմնանորոգվել է պետական ծրագրով, 398 միլիոն 880 հազար դրամ արժեքով:

Պետական մեկ այլ ծրագրով էլ , շուրջ 573 միլիոն դեւրամ արժեքով, հիմնանորոգվել է Շողակաթ-Վարդենիս մայրուղու՝ Ջիլի վարչական տարածքով անցնող շուրջ 6 կիլոմետրանոց հատվածը:

«Գեղամա աշխարհ»

ԱԽՊՐԱԾՈՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Ախպրածոր գյուղի երիտասարդական կենտրոնում տեղի է ունեցել «Թաքնված Ճանապարհ Նախաձեռնություն» կրթական ՀԿ-ի կրթաթոշակառու Լալա Ավետիսյանի համայնքային ծրագրի շնորհանդեսը եւ բժշկական գույքի հանձնման արարողությունը:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, միջոցառմանը մասնակցել են Վարդենիս համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը, «Թաքնված Ճանապարհ Նախաձեռնության» հիմնադիր տնօրեն Նանոր Պալապանեանը եւ իր աշխատակազմը:

«Թաքնված Ճանապարհ Նախաձեռնություն» ՀԿ ֆինանսավորմամբ Ախպրածոր եւ Մաքենիս բնակավայրերին տրամադրվել է դեղորայքի եւ բժշկական սարքավորումների զգալի խմբաքանակ: Բժշկական գույքը հանձնվել է Ախպրածորի բուժքույր Հայկանուշ Մանուկյանին՝ տեղում բնակիչների սպասարկումն ապահովելու նպատակով:

Ախպրածորի երիտասարդական կենտրոնում կայացած միջոցառման շրջանակներում անցկացվել է «Առաջին բուժօգնություն» թեմայով բաց դաս, որի նպատակն էր՝ երիտասարդներին եւ բնակիչներին փոխանցել կենսական կարեւորության հմտություններ արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու համար:

Համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը բարձր է գնահատել ձեւավորված եւ արդյունավետ գործընկերությունը: Կողմերը քննարկել են Ախպրածորում նոր եւ ժամանակակից երիտասարդական կենտրոն կառուցելու հեռանկարային ծրագիրը, որը կդառնա համայնքային կյանքի զարգացման նոր խթան:

«Գեղամա աշխարհ»

ԿԱԼԱՎԱՆՈՒՄ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Կալավան գյուղում ՀՀ կառավարության կողմից 2025 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կառուցվել է խմելու ջրատարի արտաքին ցանց, ինչի շնորհիվ էականորեն բարելավվել է խմելու ջրի մատակարարումը:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, Կալավանի խմելու ջրատարարի արտաքին ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմել է 53 միլիոն 366 հազար դրամ, որի 75 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Ճամբարակի համայնքապետարանը:

Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2024 թվականի հուլիսից եւ ավարտվել 2025 թվականի ընթացքում:

Ծրագրի իրականացման արդյունքում խմելու ջրատարի նախկին արտաքին ցանցը՝ 3100 մետր երկարությամբ, փոխարինվել է պոլիէթիլենային նոր խողովակներով, միաժամանակ կառուցվել է 1 աղբյուրակապ եւ 6 մարիչ հոր:

-Ծրագրից օգտվում են Կալավանի բոլոր տնտեսությունները: Խմելու ջրատարի նախկին արտաքին ցանցը հիմնովին քայքայվել էր, մատակակարվող ջրի կորուստները չափազանց շատ էին, իսկ որակի մասին խոսելն ավելորդ էր: Այս ծրագրի իրականացումից հետո հիման բոլորովին այլ պատկեր ունենք. ավելացել է մատակակարվող ջրի քանակությունը, որը տնտեսություններին հասնում է արդեն միանգամայն մաքուր վիճակում,- ներկայացրեց Կալավանի վարչական ղեկավար Սամվել Ծատուրյանը:

«Գեղամա աշխարհ»

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐԵՊԱՏ ԳՅՈՒՂՈՒՄ ԽՄԵԼՈՒ ՋՐԱՏԱՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Բարեպատ գյուղում 700 մետր երկարության խմելու ջրատարի արտաքին ցանց է կառուցվել:

Ինչպես տեղեկացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից, խմելու ջրատար ցանցը կառուցվել է Ճամբարակի համայնքապետարանի միջոցներ հաշվին: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի հուլիս ամսին եւ ավարտվել նույն տարվա սեպտեմբերին: Համայնքի բյուջեի միջոցներից շինարարության իրականացման համար հատկացվել է 850 հազար դրամ, 700 մետր երկարության պոլիէթիլենային խողովակներ եւ 10 պարկ ցեմենտ՝ աղբյուրակապի կառուցման համար:

Ծրագրի իրականացման արդյունքում Բարեպատի 10 ընտանիք ապահովվել են խմելու մշտական ու որակյալ ջրով:

-Հին ջրագիծը կառուցված էր մի քանի տասնամյակների վաղեմությամբ, այն հիմնովին քայքայվել էր, հետագա շահագործման համար պիտանի չէր, ուստի կառուցվեց նոր ջրագիծ, որը լիուլի բավարարում է տվյալ թաղամասում բնակվող 10 ընտանիքների կարիքները,- ներկայացրին Ճամբարակի համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

8.qxd 25/04/2026 17:46 Page 5

/սկիզբը՝ էջ 1-ում/

Մեր խնկարկումն ու աղոթքները ազգային համերաշխության համար են, որպեսզի հայատյաց թշնամիները մեզ ոչ միակնթարթ չտեսնեն պառակտված ու իրարից խորթացած, իրար կոկորդ կրծելիս:

Մեր խնկարկումն ու աղոթքները մեզ ցեղասպանող հրեշների պատժի ու արդար դատաստանի համար են, մեր գլխին դամոկլյան սրի պես կախված սպառնալիքների չեզոքացման համար:

Վերջապես՝ մեր խնկարկումն ու աղոթքները Հայաստանի Հանրապետության հզորացման ու ծաղկման, ապահով ու խաղաղ Հայոց հայրենիք կերտելու համար են, որին այլեւս չեն հասնելու երեկվա ու այսօրվա հայատյաց, հայասպան ճիվաղների ձեռքերը:

Իհարկե, Հայոց ցեղասպանությունը ժխտող հանցագործ երկրի տերերից, նրան ձայնակցող ու քաջալերող երկրների ղեկավարներից ու ժողովուրդներից առավել ու առաջինը մենք կուզեինք, որ նման հրեշավոր ոճրագործություն պահած չլիներ մեզ հետ, որ միլիոնավոր հայեր տեղահանված չլինեին իրենց հայրենի բնօրրանից, որ նրանց մեծ մասը չբնաջնջվեին բռնագաղթի ճանապարհներին ու Տեր-Զորի ավազուտներում, որ հարյուր հազարավոր մարդիկ չսփռվեին աշխարհով մեկ ու չապրեին պանդուխտի, բռնի ծուլվողի եղկելի ճակատագրով:

Մենք շատ կուզեինք, որ Օսմանյան Թուրքիայի բանտերից ազատ արձակված մարդասպանները, չերքեզ ու քուրդ ոճրագործները կտրտածքառատած չլինեին հայ գրողներ Դանիել Վարուժանին, Սիամանթոյին, Ռուբեն Սեւակին, Թլկատինցուն, Օսմանյան խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապին ու Վարդգես Սերինկուլյանին, Խաչատուր Ակնունուն, հարյուրավոր այլ պայծառ մտավորականների, որ իրենց տների մեջ քուրդ, թուրք ու չերքեզ բաշիբոզուկների ձեռքերով չմորթվեին հայ անպաշտպան ծերերը, կանայք ու երեխաները, որ Օսմանյան բանակում ծառայող հայ տղամարդիկ հրացանազարկ արված չլինեին, որ չկործանվեին մեր դպրոցներն ու եկեղեցիները, չպղծվեին մեր գերեզմանները, չթալանվեր այն ողջ ունեցվածքը, որ հայ ժողովուրդն իր ճակատի դառը քրտինքով ստեղծել էր դարեր շարունակ:

Մենք շատ կուզեինք, որ Խորհրդային Միության ներսում հայ մարդը միշտ հաշտ, խաղաղ ու երջանիկ ապրեր, որ եղած չլինեին Սումգայիթի, Բաքվի ու մյուս քաղաքների եղեռնագործությունները, որ Ադրբեջանն Արցախի վրա քանիցս պատերազմներով չգար:

Մենք շատ կուզեինք, որ Զարենցի, Բակունցի, Թոթովենցի, Աղասի Խանջյանի, Դրաստամատ Տեր-Սիմոնյանի նման պայծառ դեմքերը բռնի մահով ու անգերեզման մեռած չլինեին, որ հարյուր հազարավոր երիտասարդներ Ռուսաստանի անծայրածիր ռազմաճակատներում զոհված չլինեին, որ մեր պապերը, հայրերն ու նաեւ մենք այսքան ցավ ու տառապանք շալակած չլինեինք:

Այո, մենք առաջինն ենք ուզում ձերբազատվել ցեղասպանության բարդույթից, նրա պատճառած անհամար տառապանքներից: Բայց ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով:

Երբ թշնամին օրավուր բորբոքում է հայատյացության կրակը, երբ մեր ամեն մի շենում շիրմաքարերի պաղ ճակատներից մեզ են նայում մեր ազգի դահիճների ձեռքերով մատաղ հասակում շիրիմ իջած առյուծ տղաների հատու հայացքները, մենք ո՞ր իրավունքով, ի՞նչ հանգստությամբ պետք է ձերբազատվենք այդ արյունոտ պատմությունից, այդ ցավագին կորուստների հիշողություններից:

Չէ՞ որ Հայոց ցեղասպանության մասին ոչ միայն խոսում են գրքերը, դասագրքերը, վավերագրերը, գրավոր կամ բանավոր հիշողությունները, այլ նաեւ մեր աչքի առջեւ, մեր ապրած ժամանակներում տեղի ունեցած արյունոտ, ողբերգական իրադարձությունները, որոնց արդյունքում ոչ միայն տասնյակ հազարավոր հերոսամարտիկների հուղարկավորեցինք, այլ նաեւ կորցրինք հազարամյակներով հայկականության օրրան ու անառիկ բերդ հանդիսացող Արցախը:

Բայց դրանով էլ այդ ցեղասպանության էջը ոչ միայն փակված-ավարտված պատմություն չի դարձել, այլ, հակառակը, ավելի ցավատանջ իրողության մեջ է պահում հայրենիքում ապրող կամ աշխարհով մեկ սփռված բազմամիլիոն մի ողջ ազգի: Իսկ Ցեղասպանությանը միայն ֆիզիկական մահով չի պայմանավորված. այն ավելի շատ կեղեքում է ապրողներիս հոգու աշխարհը, որն անզորությունից այժմ ճչում է նենգ ու հրեշավոր թշնամու անմարդկային, հրեշավոր ու դաժան արարքներից: Հիմա Մեր հողի ու արյան բազմադարյան ոսոխը, Չարենցի բնութագրմամբ՝ «Հավերժական հիվանդը», Արցախում գրոհի է անցել հայկական մշակույթի, գրերի, վանքերի ու եկեղեցիների, դպրոցների, թանգարանների, փառքի անկյունների, շիրիմների ու շիրմաքարերի, պանթեոնների դեմ՝ փորձելով ժամ ու վայրկյան առաջ բնաջնջել այն ամենը, ինչը հայկականության հետք է հիշեցնում:

Դժվարանում եմ ասել, թե որքան ժամանակ կպահանջվի հրեշներից՝ Արցախից հայկականության հետքերը ջնջելու համար, բայց գիտեմ հաստատ, որ նրանց համար դա օրերի կամ տարիների գործ չի լինելու, գիտեմ հաստատ, որ նրանք մի օր հատուցելու են իրենց ստոր արարքների համար, ինչպես որ մեկ անգամ հատուցեցին ոչ վաղ անցյալում:

Հերթական ապրիլի 24-ին ընդառաջ նրանք հողին են հավասարեցրել Ստեփանակերտի Մայր տաճարը, մեկ անգամ եւս փաստելով, որ ոչ մի պարագայում չեն հրաժարվելու «աշխարհում թանգարանի համար մեկ հայ թողնելու» գաղափարից: Այո, նրանք սարսափում են ոչ միայն մեր ֆիզիկական գոյությունից, այլ նաեւ մեր հոգեւոր ներկայությունից, որի գոյությունն ու զորությունը օրերից մի օր անպարտելի ուժով կանգնելու է իրենց հայասպան ծրագրերի ճանապարհին ու հատուցում է պահանջելու ամեն մի ոճրագործության դիմաց:

Եվ աշխարհն ամեն օր ու ամեն ժամ ոչ միայն տեսնում է այդ ցեղասպանությունը, այլ նաեւ իր քար անտարբերությամբ մասնակից է բոլոր ոճրագործություններին՝ լինի դա ֆիզիկական թե հոգեւոր ցեղասպանություն:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել են բազմաթիվ խոշոր ու մանր երկրներ, շատ երկրներ էլ դեռ, գիտակցաբար, թե անգիտորեն, լռում են:

Ամեն դեպքում, սակայն, դրանից շատ բան չի փոխվում, քանի որ նույնիսկ Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած Ֆրանսիան, Ռուսաստանն ու ԱՄՆ-ն, որպես Մինսկի խմբի համանախագահող երկրներ, ոչ միայն չպաշտպանեցին հայ ժողովրդին նոր արհավիրքից, այլ նաեւ ակամայից մեղսակից դարձան Արցախի Հանրապետության կործանմանն ու հարյուր հազարից ավելի հայ մարդկանց հայրենազրկմանը՝ ստոր առեւտրի մեջ մտնելով մարդասպան ու հայասպան երկրների հետ:

Իսկ այդ երկրներից երկուսը՝ ԱՄՆ-ն ու Ռուսաստանը, աշխարհը շարունակում են պահել պատերազմների կիզակետում՝ կործանման սպառնալիքների տակ պահելով մոլորակի մարդկությանը: Նրանք բերել են հրթիռային պատերազմների դարը, որտեղ արդեն անզոր են մարդկային խիզախությունը, հնարամտությունն ու անձնազոհությունը, որտեղ փոխվել է պատերազմական օրենքների տրամաբանությունը, որտեղ խաղաղության մասին խոսելն էլ է դարձել պատրանք:

Ու թալանչիական այդ պատերազմները մղվում են ճանապարհների, հանքերի, ազդեցության գոտիների բաժանման համար: Իսկ նման պատերազմների մեջ փոքր ազգերի ճակատագիրը շատ ավելի ողբերգական է դառնում ճիշտ այնպես, ինչպես եղել էր, եղավ ու կա նաեւ մեր պարագայում:

Հայ ժողովրդի անմեղ արյան մեջ, ցավոք, իրենց ձեռքերը միայն թուրք դահիճները չեն թաթախել: Արյունոտ այդ խրախճանքներին մասնակցել են քրդերն ու Կովկասից Թուրքիա տեղափոխված չերքեզները, գերմանացի զինվորականները, ովքեր Առաջին աշխարհամարտի տարիներին ծառայություն են իրականացրել Թուրքիայում: Ցեղասպանության գործադրմանը նպաստել է նաեւ Գերմանիայի հանցավոր կառավարությունը, որը թեւավորել, զինել ու զորակցել է թուրքերին:

Ցեղասպանության գործն առավել դյուրացրել է ցարական Ռուսաստանի կառավարությունն՝ իր զինվորական հրամանատարության հետ՝ կազմակերպելով անհարկի, ոչնչով չհիմնավորված նահանջներ Արեւմտյան Հայաստանի գրավյալ տարածքներից ու հայ ժողովրդին մենակ թողնելով նրա դահիճների կործանարար բանակների առաջ: Ցարական Ռուսաստանի մեղսակցությանը գումարվեց արդեն բոլշեւիկյան Ռուսաստանի հայակեր քաղաքականությունը, որը ոչ միայն սկուտեղի վրա թուրքերին մատուցեց զենքի ուժով ազատագրված ողջ Արեւմտյան Հայաստանը, այլ նաեւ Արեւելյան Հայաստանի տարածքների կեսից ավելին՝ Կարսը, Սարիղամիշը, Սուրմալուն, Նախիջեւանն ու Արցախը:

Քանիցս արդեն ապացուցվում է, դարավոր թշնամության մեջ ապրող թուրքն ու ռուսը շատ արագ բարեկամանում են, երբ խոսքը վերաբերում է հայկական պետականության կայացմանն ու ամրապնդմանը: Ու այդ կեղծավոր, հրեշավոր բարեկամության արգասիքը հենց եղավ Արցախի կործանումն ու հայաթափումը:

Իրոք, անթիվ-անհամար են մեր ազգային ողբերգության մեղավորները, որոնք մեղա չեն եկել ու չեն էլ գալու: Իսկ այդ անհամար ողբերգություններում արդյո՞ք մենք որեւէ տեղ, որեւէ կերպ ու որեւէ ժամանակ մեղավոր չենք: Արդյո՞ք մենք մեր այլասիրությամբ, պատրանքային խաղաղասիրությամբ, պառակտվածությամբ, ագահությամբ ու նյութապաշտությամբ, ինքնախաբեությամբ, չարափառությամբ ու սնափառությամբ մեր տան դռները չենք բացել արհավիրքների առաջ, հայակործան դահիճների ու արյունախում, ավարառու ազգերի առաջ:

Դավաճանների անուններ ե՞ք փնտրում՝ մեր պատմագրության մեջ նրանք քիչ չեն, ազգուրացների՞ եք որոնում՝ նրանց պակաս էլ չկա: Իսկ ի՞նչ կգրի մեր պատմագրությունը նորագույն ժամանակների մասին, երբ խոսքը գնա նորանկախ Հայաստանի տնտեսության ու գիտական կառույցների փոշիացման, Հոկտեմբերի 27-ի ոճրագործության ու քաղաքական բազմաթիվ սպանությունների մասին, որոնք, որքան էլ եղել են օտարների դրդմամբ, նույնքան ու առավել էլ՝ հայ մարդկանց ձեռքերով:

Ու այսպես էլ, եղեռնից եղեռն անցնելով բազմաթիվ դարերի միջով, մեկ անգամ գոնե չենք հասցնում մտածել ազգային արժեքների, նպատակների ու իղձերի շուրջ համախմբվելու, ազգային համերաշխության մեջ ապրելու մասին: Գոնե չենք գիտակցում, որ մեր թշնամու համար բոլորս էլ ոչնչացման ենթակա նույն մարդիկ ենք, որոնց միակ մեղքը եղել է ու կա միմիայն հայ ծնվելը:

Իսկ ցեղասպանության էջը մեկընդմիշտ փակելու համար հիմա մեզ այլ ճանապարհ չկա, բացի միմյանց հանդեպ անկեղծ ու հանդուրժող լինելուց եւ հայոց պետականության շուրջ համախմբվելուց, հայրենիքին անձնուրաց նվիրվելուց, հայրենի արժեքները հոգով ու սրտով փայփայելուց, հզորանալուց, ընկած տեղից հաստատապես ու ամուր բարձրանալուց ու ոտքի կանգնելուց, մեր միտքն ու բազուկը զինելուց:

Միայն այդ դեպքում մենք զերծ կլինենք հետագա ազգակործան արհավիրքներից, միայն այդ դեպքում կապրենք լիակատար խաղաղության մեջ՝ հեռու վրիժառության նսեմ ու կեղեքող զգացումից, ատելությունից ու թշնամանքից, որը միշտ հաջողում են ցանել մեր շորջբոլորը:

Մեր անմեղ նահատակների հիշատակը, մեզ բաժին հասած անլուր ողբերգությունները ոչ թե թեւաթափ պիտի անեն մեզ, այլ, հակառակը, պետք է դարձնեն ավելի ուժեղ, տոկուն, եռանդով ու պայքարի կամքով լի, անվեհեր, վճռական, խելամիտ ու հրատեսական վճիռներ ընդունող, այդ ողբերգություններից ճշգրիտ դասեր քաղող:

Այս ապրիլի 24-ին կհաջորդեն նոր, տասնյակ ու հարյուրավոր ապրիլքսանչորսներ, բայց հայոց վերքերը ոչ մի ժամանակ չեն սպիանա, քանի դեռ չենք հասել արդարության հաղթանակի մեր հանգրվանին:

Խոսրով Խլղաթյան

ՍԵՎԱՆՈՒՄ ԲԱՑՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՀՀ Կենտրոնական բանկի նածաձեռնությամբ Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքի Բիզնես կենտրոնում բացվել է Հայաստանի դրամաշրջանառության պատմությանը նվիրված ցուցահանդես:

Այս ցուցահանդեսը ԿԲ դրամագիտական շրջագայության 16-րդ կանգառն է:

Ցուցահանդեսի բացմանը ներկա են եղել ՀՀ Կենտրոնական բանկի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, Սեւանի համայնքապետարանի պատասխանատու աշխատակիցներ, Սեւան համայնքի կրթամշակութային ոլորտի ներկայացուցիչներ:

Ցուցահանդեսի բացմանը ՀՀ օրհներգի կենդանի կատարմամբ հանդես է եկել Սեւանի Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի երգչախումբը, պարային կատարումներով՝ «Սեւան» ժողովրդական պարի անսամբլը, գեղեցիկ երգացանկով՝ Սեւանի մշակույթի կենտրոնի երգչախումբը:

Ցուցադրությունը բաց կլինի ապրիլի 14-ից 21-ը:

Ցուցահանդեսը նպատակ ունի ոչ միայն ներկայացնել Հայաստանի դրամաշրջանառության հարուստ պատմությունը, այլեւ խթանել ֆինանսական կրթությունը՝ պարզ եւ մատչելի ձեւով ներկայացնելով բանկային եւ ֆինանսական ծառայությունների օգտագործման սկզբունքները:

Ցուցահանդեսն այցելուներին հնարավորություն է տալիս՝ ծանոթանալու պատմական եւ ժամանակակից մետաղադրամներին, ՀՀ ԿԲ թողարկած դրամական եւ հուշադրամային հավաքածուներին, ինչպես նաեւ Կենտրոնական բանկի գործառույթներին ու ֆինանսական համակարգի ծառայություններից օգտվելու կանոններին:

Կենտրոնական բանկը կարեւորում է նման նախաձեռնությունները՝ որպես կրթական եւ մշակութային արժեքների տարածման, ինչպես նաեւ ֆինանսական իրազեկվածության բարձրացման կարեւոր գործիք:

Արմինե Ղուկասյան

8.qxd 25/04/2026 17:46 Page 6

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ ԵՆ «ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱՆ» ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ապրիլի 13-ից Գեղարքունիքի մարզային ու համայնքային գրադարաններում մեկնարկել են «Ազգային գրադարանային շաբաթվան» նվիրված միջոցառումները:

«Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակում Հայաստանի Ազգային գրադարանի աշխատակիցները՝ գլխավոր գրադարանավար Ներսես Հայրապետյանը, Համագործակցության եւ գրքափոխանակության բաժնի վարիչ Մայա Հայրապետյանը եւ առաջատար գրադարանավար Անիցա Գենդջյանը այցելել են Գեղարքունիքի մարզային գրադարան: Գեղարքունիքի մարզային, 7 համայնքային եւ Գեղարքունիք գյուղի դպրոցական գրադարանները համալրվել են նոր գրականությամբ:

Ազգային գրադարանի աշխատակիցները մասնակցել են նաեւ Գեղարքունիքի մարզային գրադարանի կողմից կազմակերպված միջոցառմանը՝ Երազիկ Գրիգորյանի եւ Հովիկ Չարխչյանի հետ հանդիպմանը:

Միջոցառման ընթացքում Ներսես Հայրապետյանը հանդես է եկել ողջույնի խոսքով՝ կարեւորելով նորարարության դերը գրադարանային գործում եւ ընթերցանության մշակույթի զարգացման անհրաժեշտությունը:

Նշված նախաձեռնությունները միտված են գրքային ֆոնդերի հարստացմանը, ընթերցանության խթանմանը եւ համայնքային գրադարանների զարգացմանը:

Գեղարքունիքի մարզային գրադարանում իրականացվել է «Գիրք, հեքիաթ եւ երգ» խորագրով սպասված հանդիպումը՝ սցենարիստ, մանկագիր Երազիկ Գրիգորյանի եւ գրող, գրականագետ Հովիկ Չարխչյանի հետ: Միջոցառման ընթացքում գրադարանը վերածվել է հեքիաթի, երաժշտության եւ գրականության կենդանի հարթակի, որտեղ մեկտեղվել են տարբեր արվեստների աշխարհներ:

Մանկական բաժնի ընթերցողները բեմականացրել են հատվածներ Երազիկ Գրիգորյանի հեքիաթներից, որին հետեւել է հարցուպատասխան եւ ակտիվ շփում հեղինակի հետ:

Շաբաթվա շրջանակներում Սեւան համայնքի Վ. Ստեփանյանի անվան ԳԿՀ կենտրոնական գրադարանը հյուրընկալել էր Սեւանի տարածաշրջանի դպրոցների գրադարանավարներին՝ մասնակցելու սեմինար-պարապմունքին, որը ներառում էր «Գրադարանային ֆոնդի դասակարգում», «Աշխատանք ընթերցողների հետ», «Համալրման եւ մշակման բաժնի աշխատանքներ», «Գրականության անցկացում գրադարանի գլխավոր գրքում եւ թվայնացում», «Դպրոց-գրադարան համագործակցություն» թեմաները:

Սեմինար-պարապմունքի մասնակից գրադարանավարները կենտրոնական գրադարանի կողմից ստացել են գրքեր:

«Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակում Գավառի համայնքային գրադարանում հյուրընկալվել է հոգեբան, փորձագետ, նեյրոհոգեբանության մասնագետ Արմինե Դավթյանը: Հոգեբանը լսարանին ներկայացրել է «Անձի երեք ուժերի մոդելը կրթության եւ հոգեբանական աշխատանքի մեջ» թեմայով դասախոսություն:

Հանդիպմանը մասնակցել են Գավառ համայնքի կրթամշակութային հաստատությունների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ, մանկավարժներ, հոգեբաններ եւ գրադարանավարներ:

Հոգեբանը ներկայացրել է իր հեղինակած «Անհատի տիպաբանությունը եւ ներդաշնակության մանկավարժությունը» գիրքը, ինչպես նաեւ իր հեղինակային մոտեցումները: Նա անցկացրել է ինտերակտիվ թրեյնինգ՝ «երեք ուժերի մոդելի» հիման վրա:

Հանդիպման ավարտին Արմինե Դավթյանն իր հեղինակած գրքերից նվիրել է հանդիպմանը մասնակից ուսանողներին եւ գրադարանին:

Պատմամշակութային հուշարձանների պահպանության օրվա կապակցությամբ այստեղ կազմակերպվել է Նորատուսի պատմամշակութային հուշարձաններին նվիրված բանախոսություն, միջոցառումներ են անցկացվել այլ թեմաներով:

«Ազգային գրադարանային շաբաթվա» շրջանակում միջոցառումներ են տեղի ունեցել նաեւ Վարդենիսի, Մարտունու եւ Ճաբարակի համայքնային գրադարաններում:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՆ «ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՖՈՒՏԶԱԼԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳԱՎԱԹ» ՄՐՑԱՇԱՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Գեղարքունիքում հայտնի են «ՀՀ Վարչապետի ֆուտզալի դպրոցական գավաթ» մրցաշարի մարզային փուլի հաղթողները:

Ինչպես տեղեկացրին ՀՖՖ Գեղարքունիքի մարզի ներկայացուցիչներ Վարդան Դավթյանը եւ Կամո Մոսոյանը, մրցաշարն անցկացվել է մինչեւ 15 տարեկան դպրոցական թիմերի միջեւ, ապրիլի 15-18-ի ընթացքում, ՀՀ ԿՖԳՄՍ նախարարության ու Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի համագործակցությամբ: Վարդենիս համայնքում հաղթող է ճանաչվել ու մրցաշարի մարզային փուլի մասնակցության իրավուն ձեռք բերել Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի թիմը, Ճամբարակ համայնքում՝ Թթուջուր գյուղի միջնակարգ, Սեւան համայնքում՝ Լճաշենի Ա.Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ, Գավառ համայնքում՝ Գեղարքունիքի միջնակարգ եւ Մարտունի համայնքում՝ Մարտունի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցների թիմերը:

«ՀՀ Վարչապետի ֆուտզալի դպրոցական գավաթ» մրցաշարի մարզային փուլը կանցկացվի Գավառի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցում, ապրիլի 26-ին: Հաղթող թիմը Գեղարքունիքի մարզը կներկայացնի հանրապետական մրցաշարում:

«Գեղամա աշխարհ»

ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԱՀԼԻՃԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն գյուղի մշակույթի կենտրոնի հիմնանորոգման աշխատանքները մոտենում են ավարտին:

Ինչպես տեղեկացրեց Ներքին Գետաշենի գյուղի վարչական ղեկավար Ռուբեն Զուլոյանը, Ներքին Գետաշենի մշակույթի կենտրոնի դահլիճի վերանորոգման շինարարական աշխատանքներն ընթացել են Մարտունի համայնքի 2025 թվականի «Մասնակցային բյուջետավորման» գործընթացի շրջանակներում, նախորդ տարվա աշնանից, 36 միլիոն դրամ պայմանագրային արժեքով:

-Ծրագրի շրջանակներում կատարվում են դահլիճի ներքին հարդարման, հատակի եւ պատերի նորոգման, առաստաղի վերականգնման, ինչպես նաեւ լուսավորության համակարգի արդիականացման աշխատանքներ: Իրականացվում է նաեւ բեմի վերազինում եւ դահլիճի ընդհանուր պայմանների բարելավում:

Վերանորոգման արդյունքում մշակույթի կենտրոնի դահլիճը կդառնա ավելի հարմարավետ եւ ժամանակակից՝ ծառայելով համայնքի մշակութային կյանքի ակտիվացմանը,-ներկայացրեց Ռուբեն Զուլոյանը:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆՈՒՄ ՍԿՍՎԵԼ ԵՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում արդեն սկսվել եւ ընթանում են մի շարք փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթի փոսային նորոգման եւ ճաքալցման աշխատանքները:

Գործընթացում ընդգրկված են Սեւան քաղաքի մեկ տասնյակից ավելի փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթի փոսային նորոգման աշխատանքներ:

Աշխատանքների մեկնարկը տրվել է Խաղաղության փողոցից:

Դրանք ներառում են ասֆալտբետոնե ծածկույթի կտրում, հիմքի իրականացում, բիտումի տարածում, ծածկույթի պատրաստում, դիտահորերի եւ անձրեւընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում եւ վերատեղադրում, դիտահորերի պատերի բարձրացում, անձրեւընդունիչների մաքրում:Աշխատանքներն ընդգրկում են 5780 քմ ասֆալտապատում եւ 10780 գծամետր ճաքալցում:

Ծրագրի պայմանագրային արժեքը 49 միլիոն 440 հազար դրամ է, որն ամբողջությամբ հատկացվելու է համայնքային բյուջեի միջոցներից:

Արմինե Ղուկասյան

ՄԱՔՐՎԵԼ ԵՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՏԵՍԱՐԺԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Հուշարձանների եւ տեսարժան վայրերի պահպանության միջազգային օրվա շրջանակներում Գեղարքունիքի մարզի բնակավայրերում իրականացվել են հուշարձանների տարածքների մաքրման եւ հուշարձանների լվացման աշխատանքներ:

Ինչպես տեղեկացրեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության Պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության պետ Գոռ Գասպարյանը, հուշարձանների տարածքների մաքրման ու բարեկարգման աշխատանքներին մասնակցել են Գեղարքունիքի մարզի բնակավայրերի դպրոցականները, մանկավարժները, ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության աշխատակիցները, անհատ քաղաքացիներ:

Սեւանի հրշեջ-փրկարարական ջոկատի ծառայողները հատուկ տեխնիկայի կիրառմամբ իրականացրել են համայնքի տարածքում գտնվող հուշարձանների լվացման եւ մաքրման աշխատանքներ: Մարզի տարբեր բնակավայրերում հանրակրթական դպրոցների, կրթամշակութային օջախների եւ համայնքային կազմակերպությունների ակտիվ մասնակցությամբ իրականացվել են հուշարձանների տարածքների մաքրման, շրջակա միջավայրի բարեկարգման աշխատանքներ:

-Կարեւոր է նշել, որ նման կարգի աշխատանքները շարունակական են լինելու. ապրիլի 26-ին Գեղարքունիքի մարզում հայտարարված է մաքրության եւ բարեկարգման օր, որի շրջանակում եւս կիրականացվեն հուշարձանների տարածքների մաքրման ու բարեկարգման աշխատանքներ,-ներկայացրեց Գոռ Գասպարյանը:

«Գեղամա աշխարհ»

8.qxd 25/04/2026 17:46 Page 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Աղունը գործունյա, նյութական միջոցները հավուր պատշաճի տնօրինող կին է, որի մեջ մշտապես արթուն է նաեւ կյանքի անակնկալներին պատրաստ լինելու ձգտումը, մինչդեռ, մտածողության վերջին դրսեւորումը բացակայում է նանի մոտ, ինչի համար էլ Աղունը հանդիմանում է նրան. «...Հորանց գնալիս դու էն ո՞ւմ շորն էիր հագել: էն ո՞ւմ շորն էիր հագել ապնի մահով: էն ումի՞ց ուզեցիք հոգեհացի ալյուրը, լավ միտղդ բեր... Մարդ բա կմեռնի ու իրա անտեր տանը մի հոգեհացի պատրաստություն չի ունենա՞»:

Կյանքի նկատմամբ այլ պահանջներ եւ այլ բարոյական նորմեր են առաջնորդում նանին եւ Աբելին: Տարիներ ի վեր Աբելն իր համագյուղացիների օգնական ձեռքն է եղել, մշակել է նրանց հողը, նորոգել է թիերը, ծնեցրել է կովերին, կարել է տրեխները, հաշտեցրել է գժտվածներին: Աբելի տան դուռը «կրնկի վրա բաց է եղել» բոլորի առաջ, եւ նանը երբեք մտքով անգամ չի անցկացրել, թե մի օր մահը կբախի իր դուռը, իսկ իր ընտանիքը կարիքի մեջ կհայտնվի, եւ նրանք, ովքեր արժանացել են իրենց մշտական աջակցությանը, օգնության ձեռք անգամ չեն մեկնի:

Նանի համար էլ դժվար է եղել: Նրա ապրուստը անաշխատանք հաջողությամբ չի գտնվել, սակայն նանը չի դժգոհում: Նա սիրող ու խաղաղ զավակներ է տվել աշխարհին եւ անցյալի ջերմ ու լուսավոր հիշողություններ է առել դրա դիմաց՝ «ամբարի վրա Սիմոնս էր», «աղջկերքը տորքի տակ էին», «էն մեծ, լի ընտանիքը»:

Աղունը ո՛չ հայրական տնից ու ո՛չ էլ ամուսնական կյանքից, այսպիսի հիշողություններ չունի: Արփենիկը վաղ է մահացել, ապին՝ ավելի ուշ, երկուսի մահով էլ նանն իրեն որբ ու միայնակ է զգում, սակայն շարունակում է փառք տալ Աստծուն ապրող զավակների համար եւ այն հաջողությունների, որոնք պատահում են նրանց. «Ադամոս սել է կապում, Սիմոնիկս գալիս է, Ակոփիկս սարում է, երեխես սարում չարչարվում է... աղջկերքս կան: Գոհություն քեզ, տեր...»:

Նանի բնույթն ուրիշ է: Նա երբեւէ չի մտատանջվել նյութական պակասության հոգսով: Նրան տանջողն ուրիշ բան է եղել: Նրա աչքը երբեք չի կտրվել Սիմոնի նորաստեղծ ընտանիքից եւ շարունակ ցավով է հետեւել որդու՝ խաղաղության կարոտ օջախի իրադարձություններին: Նանը իրեն գյուղեգյուղ, քաղաքից քաղաք ու վանքից վանք է գցել՝ գտնելու ,իր երեխի երեսը ուտողիցե ազատվելու գեթ մի հնար: Մայրական սիրտը չէր կարող հանդարտվել, քանի դեռ չէր գտնվել որդու տանջանքներին վերջ դնող դարմանը: Աղունը շատ նեղ, սուբյեկտիվ տեսանկյունից է գնահատել այս երեւույթը: Վիրավորանքը, ցավը այնպես դառնորեն են կրծել նրան, որ նա տասնյակ տարիներ անց էլ պահում է ու պատրաստ է նանին ցույց տալ հոգեւորականների թուղթ ու գրերը: «Բերել թաղել էիր շեմքափետիս տակ: Ցույց տա՞մ»,-հանդիմանանքով հարցնում է Աղունը: Նանի մեջ անխախտ է առաքինությունը, պատկառանքը: Վերհիշելով անցյալը, նա հոգեպես տանջվում է: Աղունի լեզվի առաջ արտասուք է թափում մի նահապետական ընտանիքի մայր, որն իր տան ու զավակների տնօրինողն ու աղախինը, սիրողն ու հանդիմանողը, աշխատեցնողն ու կերակրողն է եղել: Եվ դարձյալ մնում է անդրդվելի. «Եթե ամոթ չես անում,-ասում է նանը,-ցույց տուր»:

Այդ անցանկալի դիպվածը, որը կապված է նանի անվան հետ, մեր տեսանկյունից, միջավայրում ընդունված եւ այնտեղից թելադրվող երեւույթի հետեւանք է. «Կախարդությունը,-հուշում է Ե. Լալայանը,-Լոռում բավականին տարածված է. այստեղ էլ դրանով զբաղվում են թե՛ տղամարդիկ եւ թե՛ կանայք: Տղամարդիկ գործում են առավելապես «Վեցհազարյա», «Աղթարք», «Հավախոս» եւ ձեռագիր գրքերի ցուցմունքով...»:

«Մաթեւոսյանը կարեւորում է «բարոյական արմատների» նշանակությունը՝ ելնելով դրանց, ընդհանրապես բարոյականության խորքային ու բազմակողմանի ընբռնումից»,-նկատում է Ս. Փանոսյանը: Նանի խոհեմությունը, նրա օրինակելի արժանապատվությունը մի դեպքում չէ, որ գերազանցում են Աղունի սահմանափակ աշխարհայացքը: Նա լուռ հպարտությամբ է տարել անցյալի վշտերը եւ շարունակում է հանդուրժողականությամբ վերաբերվել նաեւ հարսի հանդիմանություններին:

Արմենակը ապրում է քաղաքում եւ «լրագրողական գիծն է զարգացնում», սրանք այն եզակի դափնիներն են, որոնցով հատուցվել է Աղունի երկարամյա պայքարը Աբելի դեմ, Նանի, Ադամի, Սիմոնի դեմ, գյուղի, գոմի, ծեծի, ցավի, ցանկանալու եւ չունենալու, ձգտելու եւ չկարողանալու, աշխատելու եւ քիչ ստեղծելու, հափշտակելու կամք չունենալու դեմ: Ինչ-որ պահի, երբ Աղունը բակում դիզում է իր հեղած արցունքների ու Սիմոնի գերմարդկային ջանքերի գնով ստեղծածը, թվում է թե նրա մեջ արթնացած մայրն է այդ անում: Սակայն իրականությունը փոքր-ինչ այլ է: Քաղաքի համար տարեցտարի խնայողաբար ետ գցածը նախատեսված է ոչ թե հանուն իր զավակի բարօրության, այլ ընդդեմ Օմակուտի եւ, հատկապես, նանի կենսակերպի: Դա ավելի շատ պայքարի, կռվի է նման, քան ծնողական օրինաչափ սիրո: Պատահական չէ, որ Աղունը շատ է ցանկանում, որպեսզի նանը լավ տեսնի այն ամենը, ինչը ինքը տանելու է քաղաք եւ լավ լսի, որ «նա փայտ չի կրծում, նրանը գլխի աշխատանք է»: Թվում է, թե խորհուրդ է հարցնում նանից, սակայն հարցի խորքում տեղեկացնում է, որ Արմենակի համար նաեւ մեծ, եղջերու գորգ է նախատեսել, տալու է ու չի խնայելու:

Աղունը որդու համար ստեղծել է ապրուստի այն միջոցները, որոնք չեն հատկացվել Սիմոնին եւ իրեն, երբ բաժանվում էին մեծ տնից: Նանը որդուն մի կով է տվել, որը սատկել է եւ մի թախտ, քանի որ այդ է եղել իր ունեցածը: Այդ բանը Աղունը շարունակ հիշում է ու չի ներում, նա չի ներում Սիմոնի հարազատներին՝ համեստ ունեցվածքի եւ շռայլ երջանկության համար, մինչդեռ ընդամենը մարդկային, սովորական ուրախություն է եղել. «Օրվա տպավորություններից, մեղքի զգացումից ու նաեւ արատներից փորձում են ձերբազատվել իրենք իրենց ու ուրիշների վրա ծիծաղելով, լիցքաթափվելով ու մաքրվելով», - նկատում է Ժ. Քալանթարյանը:

Նանը՝ որպես մեծ մայր, մի կողմից հանդես է գալիս դաստիարակողհանդիմանողի, մյուս կողմից՝ օբյեկտիվորեն խրախուսող-գնահատողի դիրքերից: Նրա մեջ ապրող մայրը բոլորի մայրն է: Այդ է պատճառը, որ նրա տնօրինած բազմանդամ ընտանիքում «մեկը մեկի մի մազին չէր դիպչում», իսկ երբ ընտանիքը նեղության մեջ էր լինում՝ «մեր ուրախությունի, մեր սերի մեջ պահում էինք մեր նեղությունը»:

Զուսպ հանդուրժողականությունը, ընտանեկան դժվարությունները գաղտնիության շղարշի տակ առնելը, դրանք ներընտանեկան միջոցներով հաղթահարելը, սովորաբար, հատուկ է փոքր բնակավայրերին, որոնց շրջանակներում հասարակությունը փոխկապակցված կենսակերպ է վարում: Նանը հարգալից է վերաբերվում հասարակական ընդունված նորմերին, մինչդեռ Աղունը նման նորմերի չի տիրապետել նախկինում եւ չի ցանկանում ընդունել դրանք այժմ:

Աղունը սիրո նկատմամբ կույր ու անհաղորդ է ի ծնե, եւ նույնիսկ իր կրծքի տակ խլրտացող սիրտն ի զորու չի եղել նրա մեջ սեր արթնացնելու՝ «փորիս խփիր՝ ինձ պետք չի ձեր լակոտը»: Նանը օժտված է նույնիսկ Աղունին սիրելու շնորհքով: Նրա սերն ու անաչառությունը անզիջում են օտար աղջկա կշտամբանքների առաջ: Նրա «որդի» դիմելաձեւի մեջ փորձառու սկեսրոջ շրջահայացություն է դրված, որին ընդառաջ գնացող է հարկավոր՝ ի դեմս հարսի, մայրություն է դրված նրա՝ «որդու ապրուստը դուրս տալը» ափսոսալու մեջ եւ այն բանի մեջ, որ նա իր որդուն «մարդորդի» հարս է ցանկանում: Տարիներ առաջ հարսի վրա ձեռք բարձրացնելով անգամ նա աչք չի փակել որդու մաքուր շապկի, մաքուր անկողնու, ժամանակին սնվելու եւ խնամված հագուկապի վրա: Նանը ողջամտորեն գնահատել է արված աշխատանքը, ներդրված ջանքը, մաշված ջիղը. «Պառավը օրհնեց թիկնաթոռները կապողի մատները եւ սեղանը կապողի մատները, սփռոցը հավանեց, սփռոցն արժանի էր որդու շնորհքին եւ հարսի շնորհքին էլ»:

«Օառերը» վիպակի հերոսուհին որդու ճակատագրով անհանգստացած մի կին է: Մենախոսության միջոցով նա իր զավակին պատմում է իր հոր՝ Իշխանի կյանքի ոդիսականը: Հերոսուհու խոսքը լի է տարիների անցուդարձով, որոնք եւ՛ գող ու ավազակ, խաբեբա ու հանցագործ Իշխանի կյանքի եղելություններն են ներկայացնում, եւ՛ այն ազնիվ, համեստ ցեղի, որին ինքը հարս է եկել: Երկու կողմերն էլ նույն հայրենիքի զավակներն են, պարզապես նրանք տարբեր կերպ են հոգում իրենց խնդիրներն ու հոգսերը. «Արյան ու գենետիկ երկու սկիզբների հակադրության մեկտեղումը ի վերջո չի հանգեցնում ընտրության, քանի որ, ըստ էության, այդ հակադրությունը չկա. մեկի ռանչպարությունը եւ մյուսի ավազակությունը ընդամենը տարազներ են, իսկ մորեմերկ սրանք երկուսն էլ բեռնածի են, իրենց ու աշխարհի հոգսի հետեւից վազողներ...»:

Վիպակում, թեեւ չկան հերոսուհու բնավորության, հոգեբանության կամ արտաքինի նկարագրություններ, սակայն նա ճանաչելի է դառնում այն կերպարի միջոցով, որի մասին խոսում է՝ որպես նախընտրելի մարդու:

Կնոջ այս կերպարը ընդդիմանում է մարդու խեղճությանը, բարությանը, հանդուրժողականությանը՝ ,քոնոնք վախենում են ծաղրին՝ բռունցքով ու զրկվելուն կտրելով պատասխանելե: ,Օառերիե մայրը հստակ դիրքորոշում ունի կյանքի նկատմամբ, նա մերժում է չեզոք կեցվածքը, թուլությունը, խեղճությունը, անտարբերությունը,- ընդգծում է Ժ. Քալանթարյանը:

Հերոսուհին չի պաշտպանում որդու սիրառատ բնույթը, ինչպես որ չի հարմարվում ամուսնու, նրա հոր, նրա պապի, նրա ողջ գերդաստանի սիրող, ներողամիտ, ազնիվ բնույթին: Նրա աչքում օրինակելի է Իշխանի տեսակը, «կատաղի վարար արյունը, անդադար, խաբեբա, շողոմքոր, համարձակ, անքուն, վրիժառու, զնգունզվարթ-ավազակ առնաուտի արյունը», որը խորթ է իր զավակին, ում հոգում մշտարթուն է խղճմտանքը, սրտացավությունը. «Խիղճ, խղճի վրա խիղճ, ներսից խիղճ, դրսից խիղճ... զավակս, զավակս, իմ հոգսս, իմ տանջանքս, իմ անհանգստությունս, իմ տառապանքս, իմ բեռս», - ասում է «Օառեր»-ի մայրը:

Հերոսուհու խոսքը սովորական հանդիմանության նման չէ, այն տառապանք է ի խորոց սրտի, ամենօրյա խնամատարություն, մայրական հոգածություն իր զավակի համար: Այս հերոսուհու փնտրածը ո՛չ արժանապատվություն եւ ո՛չ էլ բարոյականություն է, նա ուժի, քաջության, համառության, անխղճության կողմնակիցն է: Նա համոզված է՝ ով ուժեղ է, նրանից վախենում են, ով հափշտակում է, նա ունեցվածքի տեր է, ով համառ է, նա հաջողության է հասնում: «Օառերը» վիպակի հերոսուհու ամբողջ մենախոսությունը կենտրոնացած է մի որոշակի գաղափարի՝ առնական ուժի, վրիժառու կամքի, կյանքի հանգամանքներին համապատասխան ճկուն վարքագիծ ունենալու շուրջ», -գրում է Ժ. Քալանթարյանը:

Հերոսուհու խոսքը հակասում է նրա մանկության հիշողություններին: Հերոսուհին առնաուտ Իշխանի դուստրն է, բայց մանկությունը ոտաբոբիկ, գլխաբաց ու սովալլուկ է անցկացրել: Նա ապրել է որբության մեջ, ականատեսն է եղել արատավոր երեւույթների ու շարունակ տագնապել է հոր համար, որից վախեցել են ու չեն վախեցել, հետապնդել են ու չեն բռնել, նշանառել են ու չեն կրակել ու մի օր էլ օրենքի մարդիկ իրենց առաջը գցած տարել են:

Վարդոն («Տաշքենդ») ավագ սերնդի արժանապատիվ կեցվածքի կրողն է: Նրա օջախը հարմարավետ է եւ ապահով, ներդաշնակված է Օմակուտի հետ: Ակնհայտ է, որ Վարդոյի ամուսինը Ջանդառի համարձակությունը, բազկի ամրությունը, նախաձեռնողությունը չունի, սակայն նրան տրված է Վարդոյին հանդիպելու երջանկությունը: Սա մի խոհեմ կին է, որը ողն ու ծուծով ճանաչում է իր ամուսնուն, սակայն այնպիսի սեր ու հարազատություն է տածում նրա նկատմամբ, որ ի զորու է դառնում հաղթահարելու նրա՝ տհաճ իրադարձություններով աչքի ընկնող անցյալը եւ ամուսնուն էլ ազատելու անցյալի հոգսերից:

Վարդոն իր խոհեմությամբ ընդունակ է զսպելու անգամ Շուշանի հանդգնությունը: Նա, ողջամտորեն եւ մեծահոգաբար ներս է հրավիրում իր ամուսնուն այցելած դաչաղին եւ մեկնաբանում է Շուշանի այցը, թե իր տեգոր տունն է, եկել է: Վարդոն նաեւ բարի սիրտ ունի եւ ընդունակ է հասկանալու այրի կնոջ դրությունը: Այս մասին է խոսում Շուշանին մտերմաբար ճանապարհելիս նրա հետ ու նրանից հետո այրու բախտի համար Վարդոյի արտասվելը:

Վարդոն աշխատում է իր տեղում, առաջ է տանում ընտանիքի, հաճախ էլ ամուսնու գործը, ինչպես Թեւիկի հարահաս եղբայր: Սեփականում է նրա գավաթի օղին՝ ամուսնուն ազատելով նաեւ հարբելու անհարմարությունից եւ այդ բոլորը լռությամբ. «Թեկուզ գյուղացի ու թեկուզ ազգական՝ ուրիշը երբեք չպիտի տեսներ, որ Վարդոն Թեւըկի վրա համարիր մայր է – մարդ ու կին, տան գլուխ մարդ, ու տան հնազանդ ծառա կին»: Թեւիկի նկատմամբ նրա հոգատարությունը մայրական զգացմունքի է նման: Այնքան մեծ է նրա դերը ընտանիքում, երեխաների հանդեպ մայրական պարտականությունների մեջ, որ նրա մահով երիտասարդ ընտանիքը ակնթարթորեն կորցնում է սեփական հավասարակշռությունը:

Այլ բնույթի մարդ է Շուշանը: Հեղինակը նրան անվանել է «ղարաչի»՝ այդ միջոցով ակնարկելով հերոսուհու անհաշտ, աղմկոտ, խանդով ու չարությամբ լեցուն բնավորության մասին: Սակայն չմոռանանք նաեւ հերոսուհու հողմաբեկ, կյանքից հալածված դրության մասին: Քանի որ արդեն առիթ ենք ունեցել հանգամանորեն խոսելու կերպարի շուրջ, այստեղ կբավարարվենք հավելելով միայն, որ Շուշանի բնույթն իր դրսեւորումները գտել է պատերազմի վարած պարարտ հողի մեջ: Ընտանիքի որբանալը, դեռատի կյանքով առլեցուն կնոջ այրիանալը, սրտում ու երակներում երիտասարդության խլրտոցը միանգամայն բարենպաստ պայմաններ էին ներսի նենգությունը դուրս հորդելու համար: Սակայն այդ ամենից հեռու կարելի է դիտարկել զուտ ընտանիքի հոր հանդեպ հարգանքի բացակայության իրողությունը:

/շարունակելի/

Ռուզան Վարդանյան



ՀԱՅՐԵՆԻՔ

Գնամ, սարերին
«Բարի լույս» ասեմ,
Տեսնեմ՝ ինչպե՞ս են
Ցավին դիմանում...
Նայեմ ծառերի
Կանաչությանը,
Բայց արմատների
Հառաչը լսեմ,
Գիտեմ, որ նրանք
Հազարծյուղանի
Քարտեզ են հիմա...
Սարերդ կանչող
Գմբեթ են ու զանգ,
Եվ ամեն մեկը
Ժամերգությամբ է
Երկնքին նայում...
Գնամ, արտերիս
«Բարի լույս» ասեմ,
Տեսնեմ՝ ինչպես են
Անջրության մեջ
Ծարավ ու տոչոր
Քամուն դիմանում,
Թե ո՞նց են տնքում
Ապառաժները,
Երբ դավաճանի
Ոտնահետքերը
Ճամփա են բացում.
Կարծես դանակ են
Խրում սրտի մեջ
Ու չեն մահանում...
Գնամ, ադեիս
Մամռած քարի մոտ
Ծնկեմ աղոթքով,
Մեղավորի պես
Աչքերս փակեմ
Մինչև լուսանա,
Հետո վեր կենամ՝
Համբերությունս
Ուսերիս դրած
Գնամ՝ լռությամբ
Մենախոսելու
Արցունքներիս հետ:
Ապառաժների
Հառաչը կարդամ,
Հետո լուռ ննջեմ
Տաք հողիդ վրա,
Հայրենի՜ք փխրուն,
Քո ամրությունը
Համարեմ հեքիաթ,
Անունդ տալով
Ես քամի դառնամ,
Բարուրդ գրկեմ
Ու սեղմեմ կրծքիս,
Որ քեզ որբ չզգաս:

Նեկտար Ավդալյան

ԱՎԱՐՏՎԵԼ ԵՆ «ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզում ավարտվել են «Սպորտլանդիա» մարզական միջոցառման մարզային փուլի մրցումները:

Այն անցկացվել է երկու տարիքային խմբերով՝ 1-3-րդ եւ 4-6-րդ դասարանցիների միջեւ: Ներդպրոցական փուլն անցկացվել է 2026 թվականի փետրվար-մարտ ամիսներին: Այս փուլում կազմակերպվել են առանձին մրցումներ 1-6-րդ դասարանների աշակերտների միջեւ, ինչի արդյունքում ձեւավորվել են դպրոցական թիմերը: Թիմի կազմում ընդգրկվել են 5 տղա եւ 5 աղջիկ: 1-3-րդ դասարանցիների մրցումային ծրագրում ընդգրկվել են խաղային փոխանցումավազք, փոխանցումավազք արգելքների հաղթահարումով, փոխանցումավազք մարմնամարզական օղակներով, մրցումներ երկանիվ հեծանիվով եւ օլիմպիական խորհրդանիշի հավաքում վարժությունները, իսկ 4-6-րդ դասարանցիների ծրագրում՝ երկանիվ հեծանիվով վարժության փոխարեն ընդգրկվել է խաղային փոխանցումավազք բասկետբոլի գնդակով վարժությունը:

Մարտի 4-18-ը ընկած ժամանակահատվածում դպրոցական թիմերը մասնակցել են համայնքային փուլի մրցումներին, որտեղ ըստ տարիքային խմբերի 1-ին եւ 2-րդ տեղեր գրաված թիմերն իրավունք են ստացել՝ մասնակցելու մարզային փուլի մրցումներին:

1-3-րդ դասարանների աշակերտների միջեւ մարզային փուլի մրցումներն անցկացվել են 2026 թվականի ապրիլի 21-ին՝ Մարտունու Ս. Դարբինյանի անվան Հ. 2 հիմնական դպրոցի մարզադահլիճում: Ծավալված հետաքրքիր եւ համառ պայքարի արդյունքում առաջին տեղը գրավել է Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմը, երկրորդ տեղը՝ Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան Հ. 1 հիմնական դպրոցի թիմը: Երրորդ հորիզոնականում Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմն էր:

4-6-րդ դասարանների աշակերտների միջեւ մարզային փուլի մրցումներն անցկացվել են ապրիլի 22-ին՝ Գավառի Գրիշա Վահանի Ափրոյանի անվան մարզադպրոցի մարզադահլիճում, որի արդյունքում հաղթող է ճանաչվել Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան Հ. 1 հիմնական դպրոցի թիմը: 2-րդ տեղը զբաղեցրել Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երրորդ հորիզոնականը բաժին է հասել Ծակքարի միջնակարգ դպրոցի թիմին: Մարզային փուլում երկու տարիքային խմբերում 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղեր գրաված թիմերին ԿԳՄՍ նախարարության կողմից հանձնվել են հավաստագրեր եւ գավաթներ:

Մայիսի 7-ին եւ 8-ին Վանաձորում կայանալիք սպորտլանդիայի եզրափակիչ մրցումներում Գեղարքունիքի մարզը 1-3-րդ դասարանցիների մրցապայքարում կներկայացնի Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմը, իսկ 4-6-րդ դասարանցիների մրցապայքարում՝ Մարտունու Մ. Մելիք-Շահումյանցի անվան Հ. 1 հիմնական դպրոցի թիմը:

Գեղամ Չարվադարյան

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հուշարձանների եւ տեսարժան վայրերի պահպանության միջազգային օրվա շրջանակներում Գեղարքունիքի մարզի կրթամշակութային հաստատություններում կազմակերպվել են պատմության հուշարձանների հանրահռչակման միջոցառումներ:

Գեղարքունիքի երկրագիտական թանգարանի տնօրեն Մարիաննա Մուսոյանի տեղեկացմամբ՝ թանգարանում անցկացվել է տեղեկատվական միջոցառում «Նորատուսի խաչքարերը» թեմայով: Միջոցառմանն ակտիվ մասնակցություն են ունեցել Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ ի ուսանողները, Նորատուսի Ա. Սողոմոնյանի անվան N2 եւ Գավառի Մնացական Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցների աշակերտները: Թեման ամփոփվել է խաղ-վիկտորինայի միջոցով:

Թանգարանը հյուրընկալել է Պորտուգալիայի Հանրապետության Էվորա համալսարանի Հասարակական գիտությունների դպրոցի փոխդեկան, մանկավարժության եւ կրթության ամբիոնի պրոֆեսոր Խոսե Մանուել Սարագոսային, ով արտահայտել է իր երախտագիտությունը եւ կիսվել տպավորություններով:

Թանգարան են այցելել Գավառի բժշկական քոլեջի ուսանողները, մի շարք հանրակրթական դպրոցների աշակերտներ, անհատ քաղաքացիներ, օտարերկրյա զբոսաշրջիկներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության պետ Գոռ Գասպարյանի տեղեկացմամբ՝ ՊՄՊ Գեղարքունիքի մարզային ծառայության կողմից Վարդենիս համայնքի Կարճաղբյուր գյուղի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտների համար կազմակերպել է արշավ դեպի Կարճաղբյուր գյուղի «Քարե դուռ» ամրոցի տարածք:

Մարտունի քաղաքի Տիգրան Աբրահամյանի անվան ավագ դպրոցի աշակերտների համար կազմակերպել է «Բաց երկնքի տակ» ֆիլմաշարից «Բերդկունք. Բագրատունիների ամրոցը» ֆիլմի ցուցադրումը:

Գավառի քաղաքային գրադարանում կազմակերպվել է բանախոսություն «Նորատուսի պատմաճարտարապետական հուշարձանները» թեմայով, որին մասնակցել են Գավառի պետական համալսարանի, գյուղատնտեսական քոլեջի եւ ավագ դպրոցի աշակերտները, գրադարանի աշխատակիցները:

-Գեղարքունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների հանրահռչակումը շարունակական ու ամենօրյա գործընթաց է, որը պահանջում է յուրաքանչյուրիս անմնացորդ սերն ու նվիրումը, ինչպես նաեւ՝ մասնագիտական հմտությունն ու կարողությունների զարգացումը,- ներկայացրեց Գոռ Գասպարյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ ԿԳՄՄՆ «Մարտունու պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի զինղեկի պաշտոնի թափուր տեղի համար:

Զինղեկի պաշտոնի համար նախատեսված վարձատվությունը որոշվում է՝ ըստ դրույքի:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

Դիմում (ձեւ 1).

1 լուսանկար՝ 3x4 չափսի.

Փաստաթուղթ (դիպլոմ) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ«

Անձը հավաստող փաստաթուղթ.

Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում.

Ինքնակենսագրություն (Ձեւ 5).

Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ.

Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում):

Մրցույթին մասնակցողը պարտադիր պիտի ունենա պահեստզորի սպայի կոչում եւ տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից տրված տեղեկանք կամ ուղեգիր:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից. 2026թ. ապրիլի 21-ից մինչեւ մայիսի 12-ը ներառյալ, հիմք ընդունելով «Գեղամա աշխարհ» թերթի 2026 թվականի էլեկտրոնային թերթի հրապարակումը, ամեն օր ժամը 10 00-ից մինչը 15-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2026թ. մայիսի 15-ին, ժամը 14-ին, Մարտունու պետական բժշկական քոլեջում:

Հասցե. ք.Մարտունի, Նարեկացի 2/1, հեռախոս՝ (0262) 41330:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 27. 04. 2026 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: